ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/226

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.09.2020թ. թիվ /26-1/13607-2020 գրությամբ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը Ապարանի համայնքապետարանի 03.09.2020թ. թիվ 1069 գրության հիման վրա 09.09.2020թ. թիվ /26-1/13607-2020 գրությամբ նախաձեռնել է «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/226 ընթացակարգի շրջանակներում 16.09.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Ապարանի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Ապարանի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.09.2020թ. թիվ 1069 գրությամբ հայտնել է, որ Ապարանի համայնքապետարանի կարիքների համար 2020 թվականի օգոստոսի 7-ին Ապարան քաղաքի Բաղրամյան 12 և 14 շենքերի բակերի ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-86/20» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ն համաձայն իր գրության հրաժարվել է կնքել պայմանագիր:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/226 ընթացակարգի շրջանակներում 16.09.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/226 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/226 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Ապարանի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար Ապարան քաղաքի Բաղրամյան 12 և 14 շենքերի բակերի ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-86/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.08.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված

մասնակից, և որոշվել է անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ կնքել պայմանագիր:

3. Ընկերությանը 22.08.2020թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել սահմանված կարգով և սահմանված ժամկետներում ստորագրել և պայմանագիրը՝ ծավալաթերթ-նախահաշվի և տուժանքի մասին հայտարարության հետ, 2-ական օրինակից ներկայացնել Ապարանի համայնքապետարան:

4. Ընկերության կողմից 01.09.2020թ. Պատվիրատուին ներկայացվել է գրություն, համաձայն որի՝ վերջինս հայտնել է, որ հրաժարվում է «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-86/20» ծածկագրով պայմանագիրը կնքելուց:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.09.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով, որ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ն հրաժարվել է կնքել «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-86/20» ծածկագրով գնման պայմանագիրը, որոշում է կայացրել «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-86/20» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.09.2020թ. թիվ /26-1/13607-2020 գրությունը, Ապարանի համայնքապետարանի 03.09.2020թ. թիվ 1069 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Ապարանի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար Ապարան քաղաքի Բաղրամյան 12 և 14 շենքերի բակերի ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-86/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.08.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, և որոշվել է անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ կնքել պայմանագիր:

Ընկերությանը 22.08.2020թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել սահմանված կարգով և սահմանված ժամկետներում ստորագրել և պայմանագիրը՝ ծավալաթերթ-նախահաշվի և տուժանքի մասին հայտարարության հետ, 2-ական օրինակից ներկայացնել Ապարանի համայնքապետարան:

<u>Ընկերության կողմից 01.09.2020թ. Պատվիրատուին ներկայացվել է գրություն, համաձայն որի՝ վերջինս հայտնել է, որ հրաժարվում է «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-86/20» ծածկագրով պայմանագիրը կնքելուց:</u>

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.09.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով, որ «Արմշին

Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ն հրաժարվել է կնքել «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-86/20» ծածկագրով գնման պայմանագիրը, որոշում է կայացրել «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-86/20» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով Ապարանի համայնքապետարանի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 01.09.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.09.2020թ. թիվ /26-1/13607-2020 գրությամբ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ

գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**